

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 14.3/[41339]-10

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստի

ք. Երևան

19.06.2010 թ.

### ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝

ՏԻԳԲԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)

### ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
Ռ. Մարկոսյան	Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Նազարյան	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ս. Պետրոսյան	ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
Լ. Մարտիրոսյան	ՀՀ Նախագահի օգնական
Ա. Դավթյան	ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Լ. Նալչաջյան	«Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ
Ա. Թադևոսյան	«Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ
Է. Հակոբյան	«Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ
Դ. Դավթյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական խորհուրդ
Յ. Ակոսյան	Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Հ. Ափյան	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Գ. Իսկանդարյան	Երիտասարդ առաջնորդների դպրոցի կոորդինատոր
Ա. Ուդումյան	Երիտասարդության սոցիալական և զբաղմունքային հարցերի գծով փորձագետ
Ռ. Մարդարյան	«Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ
Մ. Մովսիսյան	«Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ
Ա. Հակոբյան	«Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ա. Պապյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար

## **ՕՐԱԿԱՐԳ՝**

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի աշխատակարգի հաստատում (զեկուցող՝ Ռ. Մարկոսյան):
2. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի հաստատում (զեկուցող՝ Ա. Քարամյան):
3. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ միջոցառումների և աշխատանքային խմբեր ստեղծելու մասին (զեկուցող՝ Ռ. Մարկոսյան):
4. ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականության ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունների (2010-2011 թվականների համար) հաստատում (զեկուցող՝ Ա. Քարամյան):
5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգ.
  - դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի ներդրում (զեկուցող՝ Ա. Քարամյան),
  - դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի ներկայացում (զեկուցող՝ Ա. Թադևոսյան),
  - ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի մասին որոշում (զեկուցող՝ Ա. Քարամյան):
6. «Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացման ընթացքի մասին (զեկուցող՝ Ա. Քարամյան):

## **ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝**

1. ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղար Ռ. Մարկոսյանը ներկայացրեց 2010թ. փետրվարի 10-ին կայացած ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստում Խորհրդի աշխատակարգը մշակելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կատարած աշխատանքները և, մասնավորապես, մշակված աշխատակարգի նախագիծը, որի հիմնական նպատակն է կանոնակարգել Խորհրդի աշխատանքներին վերաբերող և Խորհրդի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը: Մշակված փաստաթղթով կանոնակարգվում է Խորհրդի օրակարգի նախագծի ձևավորման ընթացակարգը, օրակարգում ներառված հարցի քննարկման և աշխատանքային խմբերի գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր և նախատեսվում է տարեկան գործունեության ծրագրի ընդունում: Առաջարկվեց հաստատել ներկայացված նախագիծը:

2. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա.Քարամյանը ներկայացրեց 2010թ. փետրվարի 10-ին կայացած ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստում Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի նախագիծը մշակելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կատարած աշխատանքները և, մասնավորապես, մշակված գործունեության ծրագրի նախագիծը: Աշխատանքային ծրագրի նախագիծը ուղարկվել է Խորհրդի բոլոր անդամներին, ստացվել են

առաջարկություններ, որոնք ամփոփված են համապատասխան տեղեկանքում: Փաստաթղթում առանձնացված են երիտասարդական քաղաքականության տիրույթում գտնվող մի շարք հարցեր, որոնց ընտրությունը պայմանավորված է քայլերի կատարման հերթականության տրամաբանությամբ և երիտասարդության համար առավել հրատապ հանդիսացող խնդիրներով: Ա. Քարամյանը ներկայացրեց նաև ծրագրի կառուցվածք և 8 հիմնական ծրագրային ուղղությունները: ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը առաջարկեց նախագծի 20-րդ և 21-րդ կետերում պատասխանատուների սյունյակում ավելացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղար Ռ. Մարկոսյանը տեղեկացրեց Երևանի քաղաքապետարանի առաջարկության մասին՝ նույն 20-րդ և 21-րդ կետերում որպես պատասխանատու ավելացնել Երևանի քաղաքապետարանին:

Առաջարկվեց հաստատել նախագիծը ներկայացված առաջարկությունների հետ միասին:

3. ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղար Ռ. Մարկոսյանը ներկայացրեց, որ առաջարկվում է ընդունել երկու որոշում, որոնք նպատակ ունեն առավել արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը:

Առաջին որոշմամբ նախատեսվում է դիմել մի շարք պետական մարմիններին՝ համապատասխան առաջարկություններ, տեղեկատվություն կամ համառոտ զեկույց ներկայացնելու հարցով: Մասնավորապես, առաջարկվում է դիմել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը (2010թ. ծրագրի 15-րդ կետի առնչությամբ), ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (2010թ. ծրագրի 11-րդ կետի առնչությամբ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը (2010թ. ծրագրի 13-րդ կետի առնչությամբ) և ՀՀ սփյուռքի նախարարությանը (2010թ. ծրագրի 14-րդ կետի առնչությամբ): ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանը առաջարկեց ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետում ժամկետը սահմանել մինչև 2010 թ. հոկտեմբերի 1-ը:

Երկրորդ որոշմամբ նախատեսվում է ստեղծել 7 աշխատանքային խումբ, որոնք տարեկան ծրագրի տարբեր միջոցառումների ուղղությամբ կիրականացնեն աշխատանքներ, կներկայացնեն համապատասխան հաշվետվություններ և առաջարկություններ:

Առաջարկվեց ընդունել որոշումները ներկայացված առաջարկության հետ միասին:

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա.Քարամյանը ներկայացրեց, որ 2010թ. փետրվարի 10-ին կայացած ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նիստում ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությանը հանձնարարվեց ներկայացնել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված՝ հասարակական կազմակերպություններին տրամադրվող դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունները: Ա. Քարամյանը նշեց, որ հաշվի առնելով, որ ընթացիկ տարվա ավարտին մնացել է ուրջ 6 ամիս, նախարարությունը առաջարկում է ներկայացված առաջնայնությունները դիտարկել նաև 2011 թվականի համար և ներկայացրեց առաջնայնությունները սահմանող փաստաթղթի նախագիծը:

Ներկայացված առաջնայնությունների ցանկը ներառում է 5 հիմնական առաջնայնություն, և յուրաքանչյուրն ունի համապատասխան ենթակետեր:

Ներկայացված որոշման նախագիծով առաջարկվում է պետական բյուջեով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհների

տրամադրման ժամանակ առաջնորդվել դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնություններով՝ միջոցների առնվազն 60%-ը տրամադրելով առաջնայնությունների շրջանակներում ներկայացված ծրագրերին:

Ա. Քարամյանի զեկույցից հետո ծավալվեց քննարկում, առաջարկվեց ընդունել ներկայացված որոշման նախագիծը՝ հավանություն տալով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնություններին:

5. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա.Քարամյանը ներկայացրեց, որ նախորդ նիստի ժամանակ խորհրդի կողմից ի գիտություն ընդունվեց պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված՝ հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի առցանց («օնլայն») ռեժիմով ներկայացման, նոր համակարգի մասին հաղորդումը: Անցած ժամանակահատվածում իրականացվել են համակարգի մշակման աշխատանքներ և հնարավորություն է ընձեռնվել 2010 թվականի հուլիսի 1-ից սկսած այս համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին տրամադրել պետական բյուջեի համապատասխան տողով նախատեսված դրամաշնորհները:

Առաջարկվող առցանց համակարգը, ըստ էության, արմատապես փոխում է ՀԿ-ներին ֆինանսավորելու մեխանիզմը: Այս համակարգով այսուհետ երիտասարդական քաղաքականության շրջանակում բոլոր դրամաշնորհային հայտերը կներկայացվեն առցանց (օնլայն) ռեժիմով: Միաժամանակ ֆինանսավորում ստացած ծրագրերի հաշվետվությունները (ինչպես բովանդակային, այնպես էլ ֆինանսական) նույնպես կներկայացվեն առցանց համակարգի միջոցով և հասանելի կլինեն հասարակությանը:

Խորհրդի անդամ, «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Թադևոսյանը, մանրամասնորեն ներկայացրեց մշակված համակարգը և պատասխանեց խորհրդի անդամների հարցերին:

Խորհրդի անդամ, ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Յ. Ակոպյանը նշեց, որ առաջարկվող համակարգը բուհերի ուսանողական խորհուրդներին հնարավորություն չի ընձեռում պետական բյուջեից դրամաշնորհներ ստանալ, քանի որ ուսխորհուրդները չունեն հասարակական կազմակերպությունների կարգավիճակ: Խորհրդի անդամ, «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ Ռ. Սարգսյանը նշեց, որ գյուղերում գործող երիտասարդական ակումբները հաճախ նույնպես գրանցված չեն որպես ՀԿ-ներ և ըստ էության չեն կարողանում օգտվել պետական բյուջեի կողմից ընձեռնված դրամաշնորհային ծրագրերից:

Խորհրդի նախագահ, ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը կարևորեց տարբեր երիտասարդական խմբերի մասնակցության և երիտասարդական ոլորտում բազմազանության ապահովման խնդիրը: Տ. Սարգսյանը նշեց, որ ՀԿ-ի կարգավիճակի բացակայությունը խոչընդոտ չպետք է հանդիսանա նշված երիտասարդական խմբերին աջակցելու համար և, որպես լուծման տարբերակ, առաջարկեց նրանց կողմից ներկայացված ծրագրերը ֆինանսավորել համապատասխան պայմանագիր կնքելով այդ կազմակերպությունների ղեկավարների հետ՝ որպես ֆիզիկական անձ:

Առաջարկվեց հավանություն տալ ներկայացված համակարգին, ընդունել ներկայացված որոշման նախագիծը և առաջարկել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը միջոցներ ձեռնարկել հասարակական կազմակերպությունների կարգավիճակ չունեցող երիտասարդական տարբեր կառույցներին՝ (ուսանողական խորհուրդներ, գյուղական երիտասարդական ակումբներ և այլ) առաջարկվող դրամաշնորհային ծրագրերից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

6. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա.Քարամյանը ներկայացրեց ՀՀ կառավարության կողմից ընդունված «Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացման ընթացքը: Ծրագրի

իրականացման նպատակով համագործակցող կազմակերպությունների թիվը՝ 11 բանկ և 3 վարկային կազմակերպություն: Վերաֆինանսավորված վարկերի ընդհանուր թիվը՝ 69 վարկ, ընդհանուր պայմանագրային ծավալը՝ 620,400,000 ՀՀ դրամ (միջինը մեկ վարկին շուրջ 8 990 000 դրամ): Տրամադրված, բայց դեռ վերաֆինանսավորման չներկայացված վարկերի ընդհանուր ծավալը՝ 113,600,000 ՀՀ դրամ (վարկերի ընդհանուր թիվը 13), համագործակցող բանկերի/վարկային կազմակերպությունների մոտ ընթացքում գտնվող վարկերի ընդհանուր ծավալը՝ շուրջ 53,300,000 ՀՀ դրամ (վարկերի ընդհանուր քանակը 6):

Ա. Քարամյանը նշեց, որ եթե պահպանվեն վարկերի տրամադրման նույն տեմպերը ապա տարեվերջին կունենանք «Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շուրջ 60-70% կատարողական, ինչը բացատրվում է իրենց կողմից դեռևս ծրագրի քննարկման ժամանակ մատնանշած որոշ ֆինանսական պայմանների խստությամբ: Խորհրդի նախագահ, ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը նշեց, որ կարծիք կար, որ շատ արագ նախատեսված երեք միլիարդ դրամը կսպառվի, և անհրաժեշտություն կառաջանա նոր միջոցներ տրամադրել: Սակայն նա չէր կիսում այդ կարծիքը և համոզված էր, որ սահմանած չափանիշները բավականին խիստ են, և, միգուցե, ծրագրի սկզբի համար արդարացված, որպեսզի հնարավորություն ընձեռնվի ապրոբացիայի ենթարկել մեթոդաբանությունը, ինչպես նաև բանկերը պատրաստ լինեին այդ գործընթացին: Ամփոփելով՝ վարչապետը նշեց, որ նախնական գնահատականները ցույց են տալիս, որ իրականում ծրագիրը դանդաղ է առաջ գնում, և պետք է անդրադառնալ վարկային պայմաններին:

## ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի աշխատակարարը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը:
3. Նպատակ ունենալով առավել արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը առաջարկել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը (2010թ. գործունեության ծրագրի 15-րդ կետի առնչությամբ), ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (2010թ. գործունեության ծրագրի 11-րդ կետի առնչությամբ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը (2010թ. գործունեության ծրագրի 13-րդ կետի առնչությամբ) և ՀՀ սփյուռքի նախարարությանը (2010թ. գործունեության ծրագրի 14-րդ կետի առնչությամբ) ներկայացնել համապատասխան առաջարկություններ և համառոտ զեկույց:
4. Նպատակ ունենալով առավել արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը՝ ստեղծել համապատասխան աշխատանքային խմբեր և հաստատել խմբերի կազմը:
5. Հավանություն տալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ներկայացված ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված 2010-2011 թվականների հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնություններին: Առաջարկել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը դրամաշնորհների տրամադրման ժամանակ առաջնորդվել դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնություններով՝ միջոցների առնվազն 60%-ը տրամադրելով առաջնայնությունների շրջանակներում ներկայացված ծրագրերին:

6. Հավանություն տալ երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի ներդրման առաջարկին և առաջարկել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը 2010 թվականի հուլիսի 1-ից դրամաշնորհները տրամադրել առցանց համակարգի միջոցով, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել հասարակական կազմակերպության կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ուսանողական և երիտասարդական կազմակերպված խմբերին կամ կազմակերպություններին դրամաշնորհային ծրագրերից ֆինանսավորում ստանալու համար համապատասխան ընթացակարգերի մշակման ուղղությամբ և դրանք ներդնել դրամաշնորհների առցանց համակարգում: Հանձնարարել Խորհրդի նախագահի տեղակալ Ա. Քարամյանին և Խորհրդի քարտուղար Ռ. Մարկոսյանին ներկայացնել առաջարկություն հասարակական կազմակերպությունների ծրագրերի ֆինանսավորման հարցերով Խորհրդի փորձագիտական խմբի անհատական կազմի վերաբերյալ: Առաջարկել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի համար սահմանել տրամադրվող ֆինանսական միջոցների չափաբաժիններ՝ ըստ նախկինում բյուջեից դրամաշնորհ ստանալու, ինչպես նաև ըստ ծրագրերի տիպերի:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

19 հունիսի 2010 թվականի N 1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 12-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ վարչապետին  
առընթեր ազգային երիտասարդական  
քաղաքականության խորհրդի  
19 հունիսի 2010թ. նիստի N 1 որոշման

**Հայաստանի Հանրապետության վարչապետին  
առընթեր ազգային երիտասարդական  
քաղաքականության խորհրդի աշխատակարգ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի (այսուհետ՝ Աշխատակարգ) նպատակն է առավել արդյունավետ դարձնել Խորհրդի աշխատանքները և կանոնակարգել Խորհրդի աշխատանքներին վերաբերող և Խորհրդի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը:

**2. Խորհրդի օրակարգը և նիստերը**

3. Խորհրդի օրակարգի նախագիծը քննարկվում է Խորհրդի նախագահի, Խորհրդի նախագահի տեղակալի և Խորհրդի քարտուղարի կողմից: Տեղի ունեցած քննարկումների արդյունքում Խորհրդի քարտուղարը նախապատրաստում է նիստի օրակարգի նախագիծը և Խորհրդի նիստից առնվազն հինգ օր առաջ ապահովում օրակարգի նախագծի և կից փաստաթղթերի առաքումը Խորհրդի անդամներին: Նիստի օրակարգը հաստատվում է Խորհրդի նիստում:

4. Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է հանդես գալ Խորհրդի նիստի օրակարգում համապատասխան հարց ներառելու առաջարկությամբ: Օրակարգի նախագծում հարցը ներառելու համար անհրաժեշտ է նախապես առաջարկությունը համապատասխան հիմնավորումներով, առաջարկվող որոշման նախագծով ներկայացնել Խորհրդի քարտուղարին: Խորհրդի անդամը նիստի ընթացքում Խորհրդի օրակարգը հաստատելու ժամանակ կարող է նույնպես հանդես գալ համապատասխան առաջարկություններով:

5. Օրակարգի յուրաքանչյուր հարց պետք է ունենա հիմնական զեկուցող, որը կարող է չհանդիսանալ Խորհրդի անդամ և մասնակցել Խորհրդի նիստին խորհրդակցական ձայնով՝ խորհրդի նախագահի հրավերով: Հիմնական զեկուցողին ելույթի համար տրամադրվում է մինչև 10 րոպե, այնուհետև նրան կարող են տրվել հարցեր, որից հետո տեղի է ունենում քննարկում:

**3. Աշխատանքային խմբեր**

6. Խորհուրդը առանձին հարցերի քննարկման կամ որոշակի աշխատանքներ կատարելու նպատակով ստեղծում է աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբի ղեկավար կարող է լինել միայն Խորհրդի անդամը, իսկ աշխատանքային խմբերում խորհրդի անդամի



առաջարկությամբ կարող են ընդգրկվել Խորհրդի անդամ չհանդիսացող անձինք՝ փորձագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական մարմինների աշխատակիցներ և այլն:

7. Աշխատանքային խմբերը համապատասխան աշխատանքներ ծավալելուց հետո խորհրդի նիստում հանդես են գալիս հաղորդմամբ:

#### **4. Խորհրդի աշխատանքները**

8. Խորհրդի աշխատանքները կազմակերպվում են տարեկան գործունեության ծրագրի համաձայն, որը հաստատվում է Խորհրդի կողմից:

9. Խորհրդի աշխատանքները արդյունավետ իրականացնելու նպատակով Խորհուրդը կարող է դիմել հանրապետական գործադիր մարմիններին՝ երիտասարդական քաղաքականության տարբեր հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն, ամփոփ հաշվետվություն կամ զեկույց ներկայացնելու առաջարկով:

10. Յուրաքանչյուր տարվա աշխատանքները ամփոփելուց հետո Խորհուրդը հանդես է գալիս համապատասխան հաշվետվությամբ:

11. Խորհրդի նիստերի արձանագրությունները, որոշումները, հաշվետվությունները և այլ փաստաթղթեր հրապարակվում են համապատասխան համացանցային կայքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

19 հունիսի 2010 թվականի N 2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

-----

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 8-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված  
ՀՀ վարչապետին  
առընթեր ազգային երիտասարդական  
քաղաքականության խորհրդի  
19 հունիսի 2010թ. նիստի N 2 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Ներածություն**

Երիտասարդական քաղաքականությունն ընդգրկում է հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտները, և այդ ոլորտներում իրականացվող համակարգված աշխատանքների համադրումը հնարավորություն է ընձեռում արձանագրել արդյունավետ ազգային երիտասարդական քաղաքականություն: Միաժամանակ ակնհայտ է, որ արդյունավետ երիտասարդական քաղաքականություն հնարավոր է իրականացնել միայն համապատասխան ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա:

Ելնելով այն նախադրյալից, որ ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի հիմնական առաքելությունը իրականացվող ազգային երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացումն է, Խորհրդի գործունեության ընթացքում առավել կարևորվում է երիտասարդական քաղաքականության միջգերատեսչական բնույթի շեշտադրումը, իրականացվող քաղաքականության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առավել լայն շրջանակի ներգրավումը երիտասարդներին հուզող հարցերի քննարկման և որոշումների նախապատրաստման գործընթացում, գերակա ուղղությունների հստակեցումն ու առկա իրավիճակի մանրամասն ուսումնասիրությունը (գույքագրումը):

2010 թվականի համար ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը առանձնացրել է երիտասարդական քաղաքականության տիրույթում գտնվող մի շարք հարցեր, որոնց ընտրությունը պայմանավորված է քայլերի կատարման հերթականության տրամաբանությամբ և երիտասարդության համար առավել հրատապ հանդիսացող խնդիրներով: Նշված հարցերի հիման վրա մշակվել է ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը, որը սահմանում է ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010թ. ընթացքում իրականացվող աշխատանքների առաջնահերթություններն ու իրականացվող միջոցառումների շրջանակը:

**Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության  
խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2010 թվականի գործունեության ծրագիր**

N	Աշխատանքի անվանումը	Նպատակը	Իրականացվող աշխատանքի նկարագրությունը, արդյունքը	Պատասխանատուն	Ժամկետը
<b>1. Խորհրդի գործունեության հետ կապված կազմակերպչական խնդիրներ</b>					
1.	Խորհրդի աշխատակարգի ընդունում	Առավել արդյունավետ և կանոնակարգված դարձնել Խորհրդի աշխատանքները	Աշխատանքային խմբի ստեղծում, Խորհրդի աշխատակարգի նախագծի մշակում	Աշխատանքային խումբ	2010թ. հունիս
2.	Խորհրդի աշխատանքային խմբերի ձևավորում	Ապահովել քննարկվող հարցերի բազմակողմանի ուսումնասիրությունը, խորհրդի անդամներին ներկայացնել քննարկվող հարցերը	Աշխատանքային ուղղությունների հաստատում, առանձին աշխատանքային խմբերի ձևավորում	Խորհուրդ	2010թ. հունիս-նոյեմբեր
3.	Խորհրդի 2011 և 2012 թվականների գործունեության ծրագրի մշակում	Ապահովել Խորհրդի նպատակների ու խնդիրների իրականացման արդյունավետ միջոցներ	Աշխատանքային խմբի կողմից Խորհրդի 2011 և 2012 թվականների գործունեության ծրագրի մշակում՝ հաշվի առնելով 2010թ. գործունեության ծրագրի իրականացման ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև ընդունված ինդիկատորներին համապատասխան ՀՀ երիտասարդական քաղաքականության գնահատման արդյունքները	Աշխատանքային խումբ	2010թ. նոյեմբեր-դեկտեմբեր

<b>2. Հայաստանի Հանրապետությունում իրականացվող երիտասարդական քաղաքականության գնահատում և առաջարկությունների մշակում</b>					
4.	Ընդունված ինդիկատորների համակարգի կիրառմամբ ՀՀ երիտասարդական քաղաքականության գնահատում	Դիտարկել երիտասարդական քաղաքականության առկա վիճակը, ապահովել ՀՀ երիտասարդական քաղաքականության համապատասխանությունը եվրոպական ընդունված չափորոշիչներին, մշակել երիտասարդական քաղաքականության զարգացման առաջարկությունները	ՀՀ երիտասարդական քաղաքականության գնահատման ամփոփ զեկույց	Աշխատանքային խումբ	2010թ. հունիս-սեպտեմբեր
5.	ՀՀ-ում իրականացվող երիտասարդական քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Ապահովել ՀՀ երիտասարդական քաղաքականության համապատասխանությունը եվրոպական ընդունված չափորոշիչներին	Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Աշխատանքային խումբ	2010թ. օգոստոս-հոկտեմբեր
<b>3. Երիտասարդական քաղաքականության նորմատիվ-իրավական հենքի զարգացում</b>					
6.	Աջակցություն պետական բյուջեի միջոցներով ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհների տրամադրման համակարգի ներդրմանը	Առավել արդյունավետ դարձնել պետական բյուջեով ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհների գործընթացը	Պետական բյուջեի միջոցներով ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհների տրամադրման էլեկտրոնային համակարգի կիրարկմանը փորձագիտական և կազմակերպչական աջակցության ցուցաբերում	Խորհուրդ, Փորձագիտական խումբ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2010թ. հունիս

7.	Առկա նորմատիվ իրավական փաստաթղթերի համակարգված ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում	Կազմել երիտասարդական քաղաքականության նորմատիվ-իրավական ընդգրկուն բազա և գնահատել այն՝ նշելով զարգացման և/կամ փոփոխման անհրաժեշտության մասին	Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի, ռազմավարության և այլ փաստաթղթերի փոփոխությունների նպատակահարմարության դիտարկում և անհրաժեշտության դեպքում համապատասխան փաստաթղթերի նախագծերի մշակում	Խորհուրդ, Աշխատանքային խումբ	2010թ. հուլիս-հոկտեմբեր
8.	ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում պետական երիտասարդական քաղաքականության 2010 թ. առաջնությունների մշակում	Ապահովել պետական երիտասարդական քաղաքականության նպատակաուղղված և հասցեական քաղաքականության իրականացումը	Առաջնությունների ցանկի մշակում և ըստ առաջնությունների որոշակի ծրագրային և դրամաշնորհային առաջարկների մշակում կամ հայտարարում	Խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2010թ. հունիս
9.	Երիտասարդության մասին օրենքի նախագծի քննարկում	Առավել արդյունավետ և գործուն դարձնել երիտասարդական ոլորտի օրենսդրական նախագծերը	Լսումներ խորհրդում՝ ներգրավելով կազմակերպված երիտասարդությանը, հանդիպում ԱԺ համապատասխան հանձնաժողովի և նախագծի հեղինակների հետ	Խորհուրդ Աշխատանքային խումբ	2010թ. սեպտեմբեր
10.	«Օգնություն ցուցաբերելու նպատակով և կամավոր աշխատանքների կատարման կարգի պայմանների մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում	Բարձրացնել «կամավոր աշխատանքի» դերն ու նշանակությունը, ապահովել կամավորականության ինստիտուցիոնալ կայացումը	Օրենքի նախագծի քննարկում՝ համապատասխան պատասխանատու պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների հետ	Աշխատանքային խումբ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2010թ. սեպտեմբեր-հոկտեմբեր

4. Երիտասարդական քաղաքականության միջգերատեսչական համագործակցություն					
11.	Ուսանողական ինքնակառավարման համակարգի հզորացում և ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնում	Աջակցել ուսանողական կազմակերպությունների արդյունավետ գործունեությանը	Պետական բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ամփոփ հաշվետվության մշակում և նրանց զարգացման խնդիրների վերաբերյալ լսումների կազմակերպում	Խորհուրդ ՀՀ ԿԳՆ ՀՀ սփյուռքի նախարարություն	2010 թ. հունիս- հոկտեմբեր
12.	Աջակցություն որակյալ և մրցունակ բարձրագույն կրթության համակարգի ձևավորմանը	Նպաստել հանրապետության բարձրագույն կրթության համակարգի զարգացմանը, երիտասարդության շրջանում որակյալ և մրցունակ կրթություն ստանալու գիտակցության կարևորում	Բարձրագույն կրթության բարեփոխումների ներկա փուլի, կրթության որակի բարձրացման, կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի և մի շարք այլ խնդիրների քննարկում, որակյալ կրթական ծառայությունների կազմակերպման գործընթացին երիտասարդության մասնակցության ապահովման առաջարկությունների ներկայացում	Խորհուրդ ՀՀ ԿԳՆ Աշխատանքային խումբ	2010 թ. սեպտեմբեր- դեկտեմբեր
13.	Աջակցություն երիտասարդության զբաղվածության և ձեռներեցության ընդլայնման ծրագրերին	Աջակցել երիտասարդության զբաղվածության խնդիրների լուծմանը, երիտասարդների մասնագիտական աճին	Երիտասարդության զբաղվածության և ձեռներեցության խթանման պետական ծրագրերի քննարկում, ժամանակակից նորարարական գործիքների ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, երիտասարդության զբաղվա-	Խորհուրդ, ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքային խումբ	2010 հունիս- նոյեմբեր

			ծության ոլորտում իրականացվող ծրագրերի համակարգման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ		
14.	Մփյուռքի երիտասարդների մասնակցությունն ազգային երիտասարդական քաղաքականությանը	Հայրենիք-սփյուռք գործակցության զարգացում	Քննարկումներ և առաջարկություններ արդյունավետ համահայկական երիտասարդական նախաձեռնությունների վերաբերյալ	Խորհուրդ ՀՀ սփյուռքի նախարարություն Աշխատանքային խումբ	2010 հուլիս-նոյեմբեր
15.	Երիտասարդական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ վիճակագրական ցուցանիշների համակարգի կատարելագործում	Կատարելագործել երիտասարդական ուսումնասիրությունների համար ճշգրիտ վիճակագրական տեղեկատվության ձեռքբերման գործընթացը	Ազգային վիճակագրական քաղաքականության համատեքստում երիտասարդությանը վերաբերող տվյալների համակարգի վերլուծում, պետական երիտասարդական քաղաքականությանն առնչվող վիճակագրական տվյալների համակարգի կատարելագործմանն ուղղությամբ առաջարկությունների մշակում	Խորհուրդ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	2010 թ. հուլիս-օգոստոս
16.	Աջակցություն երիտասարդների առողջության պահպանման պետական ծրագրերին	Նպաստել առողջ ապրելակերպին, երիտասարդների առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը	Երիտասարդներին առնչվող պետական առողջապահական ծրագրերի ամփոփ ներկայացման քննարկում և համապատասխան առաջարկությունների ներկայացում	Խորհուրդ, ՀՀ առողջապահության նախարարություն	2010 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր



17.	Երիտասարդների բնակարանային խնդիրներ	Նպաստել երիտասարդներին մատչելի բնակարանների ապահովման ծրագրի իրականացմանը	Երիտասարդներին առաջարկվող մատչելի բնակարանային ծրագրերի արդյունքների քննարկում և դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:	Խորհուրդ Աշխատանքային խումբ,	2010 թ. հունիս- հոկտեմբեր
18.	Աջակցություն երիտասարդ գիտնականների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը	Աջակցել գիտության ոլորտի գրավչության մեծացմանը, գիտության երիտասարդացմանը	Երիտասարդներին առաջարկվող մատչելի բնակարանների ծրագրերում գիտնականների ներգրավման առաջարկությունների ու մեխանիզմների մշակում	Խորհուրդ Աշխատանքային խումբ,  ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,  ՀՀ ԳԱԱ	2010 թ. հունիս- դեկտեմբեր
<b>5. Մարզերում և համայնքներում իրականացվող երիտասարդական քաղաքականություն</b>					
19.	Մարզերում երիտասարդական քաղաքականության խնդիրներ	Աջակցել մարզերում արդյունավետ երիտասարդական քաղաքականության իրականացման գործիքների ձևավորմանը	Մարզերում երիտասարդական քաղաքականության խոչընդոտների քննարկում, արտագնա նիստերի անցկացում մարզային երիտասարդական կենտրոններում, երիտասարդական կենտրոնների խորհուրդների ձևավորման աշխատանքներին աջակցում, մարզպետներին կից երիտասարդական խորհուրդների ստեղծում	Խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Աշխատանքային խումբ	2010թ. հունիս- դեկտեմբեր

20.	Համայնքային մակարդակներում երիտասարդական քաղաքականության ներդրման խրախուսում	Նպաստել համայնքային մակարդակներում երիտասարդության ոլորտի խնդիրների լուծման համակարգված մեխանիզմների ձևավորմանը, խրախուսել երի-տասարդության մասնակցությունը իրենց իսկ խնդիրների վերհանման և լուծման աշխատանքներին	Համայնքային երիտասարդական քաղաքականության մշակման մրթցույթների հայտարարում, դրանց իրականացման խրախուսում	Խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքապետարան Աշխատանքային խումբ	2010 թ. հունիս-դեկտեմբեր
21.	Երևան քաղաքում իրականացվող երիտասարդական քաղաքականություն	Նպաստել Երևան քաղաքում հասցեական երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացմանը	Երևանում երիտասարդական քաղաքականության խոչընդոտների քննարկում	Խորհուրդ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքապետարան Աշխատանքային խումբ	2010թ. Նոյեմբեր-դեկտեմբեր
<b>6. Հայրենասիրական և հոգևոր մշակութային խնդիրներ</b>					
22.	Աջակցություն երիտասարդության բարոյահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծմանը	Աջակցել ազգային բանակ գորակոչվելուն և ծառայությանն առնչվող մի շարք խնդիրների լուծմանը, ազգային բանակում ծառայած երիտասարդների խրախուսման գործուն մեխանիզմների ներդրում	Քննարկումներ և ուսումնասիրություններ ազգային բանակում ծառայությանը վերաբերող մի շարք խնդիրների շուրջ, համապատասխան առաջարկությունների մշակում	Աշխատանքային խումբ, ՀՀ պաշտպանության նախարարություն	2010 թ. հունիս-դեկտեմբեր

23.	Հոգևոր և մշակութային խնդիրների վերաբերյալ երիտասարդության գիտելիք-ների և տեղեկացվածության մակարդակի բարձրացում	Աջակցել երիտասարդների հոգևոր-մշակութային խնդիրների մեջ ինքնուրույնության մակարդակի բարձրացմանը, երիտասարդների կողմից ազգային և համամարդկային հոգևոր մշակութային արժեքների յուրացմանը	Քննարկումների և ուսումնասիրությունների կազմակերպում, համապատասխան առաջարկությունների մշակում	Աշխատանքային խումբ	2010 թ. հունիս-դեկտեմբեր
<b>7. Արցախ-Հայաստան երիտասարդական ծրագրեր</b>					
24.	Արցախի երիտասարդության մասնակցության խթանում	Աջակցել Լեռնային Ղարաբաղում իրականացվող երիտասարդական քաղաքականությանը, նպաստել ԼՂՀ երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների մասնակցությանը ՀՀ-ում ընթացող ոլորտի գործընթացներին	Պարբերական փոխայցելությունների կազմակերպում, երիտասարդական քաղաքականության խորհրդի ձևավորում, երիտասարդական կազմակերպությունների մասնաճյուղերի ստեղծման խրախուսման մեխանիզմների ներդրում, ուսուցողական ծրագրերի իրականացում:	Խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Աշխատանքային խումբ,	2010 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր
<b>8. Միջազգային համագործակցության զարգացում</b>					
25.	Աջակցություն միջազգային երիտասարդական աշխատանքում ՀՀ երիտասարդական կազմակերպությունների մասնակցությանը	Աջակցել Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների միջազգային ինտեգրացիային	Քննարկումների և ուսումնասիրությունների կազմակերպում, համապատասխան առաջարկությունների մշակում	Խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ ԱԳՆ Աշխատանքային խումբ,	2010 թ. հունիս-դեկտեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2010 թվականի N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով առավել արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2010 թվականի գործունեության ծրագիրը և առաջնորդվելով Խորհրդի աշխատակարգի 9-րդ կետով՝ Խորհուրդը որոշում է.

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող հետազոտությունների և տվյալների հրապարակումների ժամանակ երիտասարդների տարիքային խումբը՝ 18-30 տարեկան հստակորեն առանձնացնելու և համապատասխան երիտասարդական վիճակագրությունը բարելավելու ուղղությամբ:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը մինչև 2010 թվականի հոկտեմբերի 1-ը ներկայացնել համառոտ զեկույց՝ ՀՀ պետական բուհերում ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության պայմանների, ՀՀ օրենսդրությամբ ուսանողներին վերապահված ԲՈՒՀ-ի կառավարման մարմինների աշխատանքներին մասնակցելու, ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացման և ինքնակառավարման համակարգի հզորացման ուղիների վերաբերյալ:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը երկամսյա ժամկետում ներկայացնել համառոտ զեկույց՝ երիտասարդության զբաղվածության և ձեռներեցության խթանման պետական ծրագրերի և համապատասխան

համագործակցության (այդ թվում միջգերատեսչական) արդյունավետության բարձրացման ուղիների մասին:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը մեկամսյա ժամկետում ներկայացնել համառոտ զեկույց՝ Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում երիտասարդական ծրագրերի և համապատասխան միջոցառումների ուղղությամբ երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ հնարավոր համագործակցության ուղիների մասին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2010 թվականի N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով առավել արդյունավետ իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2010 թվականի գործունեության ծրագիրը և առաջնորդվելով Խորհրդի կանոնադրության 12-րդ կետով և Խորհրդի աշխատակարգի 6-րդ կետով՝ Խորհուրդը որոշում է.

1. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 4-րդ կետի՝ «Ընդունված ինդիկատորների համակարգի կիրառմամբ ՀՀ երիտասարդական քաղաքականության գնահատում», 5-րդ կետի՝ «ՀՀ-ում իրականացվող երիտասարդական քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում», և 7-րդ կետի՝ «Առկա նորմատիվ իրավական փաստաթղթերի համակարգված ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում», շրջանակներում աշխատանքներ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Զ. Լավյան - խմբի ղեկավար, «Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)

Ռ. Մարկոսյան - Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)

Ա. Թադևոսյան - «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Ա. Հակոբյան - «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն (խորհրդի անդամ)

Լ. Նալչաջյան - Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)

Ռ. Սարգսյան - «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Մ. Մովսիսյան - «Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ (խորհրդի անդամ)

Ա. Ուդումյան - Երիտասարդության սոցիալական և զբաղվածության հարցերի գծով փորձագետ (խորհրդի անդամ)

Ա. Սողոմոնյան - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ:

2. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 9-րդ կետի՝ «Երիտասարդության մասին օրենքի նախագծի քննարկում», և 10-րդ կետի՝ «Օգնություն ցուցաբերելու նպատակով և կամավոր աշխատանքների կատարման կարգի պայմանների մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում», շրջանակներում աշխատանքներ իրականացնելու և համապատասխան քննարկումներ կազմակերպելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Լ. Նալչաջյան - խմբի ղեկավար, «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)

Է. Բաբայան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)

Ա. Դավթյան - ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (խորհրդի անդամ)

Զ. Լավյան - «Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)

Դ. Դավթյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական խորհուրդ (խորհրդի անդամ)

Յ. Ակոպյան - Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)

Ռ. Սարգսյան - «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

Մ. Մովսիսյան - «Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ (խորհրդի անդամ)

Ա. Հակոբյան - «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն (խորհրդի անդամ)

Հ. Ափյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)

3. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 17-րդ կետի՝ «Երիտասարդների բնակարանային խնդիրներ», և 18-րդ կետի՝ «Աջակցություն երիտասարդ գիտնականների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը», շրջանակներում աշխատանքներ իրականացնելու և համապատասխան հաշվետվություն մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ա. Միրթարյան - խմբի ղեկավար, «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

- Ա. Քարամյան - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
- Է. Հակոբյան - «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Ռ. Սարգսյան - «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Դ. Դավթյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական խորհուրդ (խորհրդի անդամ)

4. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 19-րդ կետի՝ «Մարզերում երիտասարդական քաղաքականության խնդիրներ», 20-րդ կետի՝ «Համայնքային մակարդակներում երիտասարդական քաղաքականությունների ներդրման խրախուսում», և 21-րդ կետի՝ «Երևան քաղաքում իրականացվող երիտասարդական քաղաքականություն», շրջանակներում աշխատանքներ իրականացնելու և համապատասխան հաշվետվություն և առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- Ա. Հակոբյան - խմբի ղեկավար, «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն (խորհրդի անդամ)
- Վ. Տերտերյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ (խորհրդի անդամ)
- Է. Թումանյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչության պետ (խորհրդի անդամ)
- Ա. Թադևոսյան - «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Լ. Նալչաջյան - «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)
- Մ. Մովսիսյան - «Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ (խորհրդի անդամ)
- Ռ. Սարգսյան - «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Յ. Ակոբյան - Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Հ. Ավիյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Դ. Դավթյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողական խորհուրդ (խորհրդի անդամ)
- Է. Մանանդյան - «Նոր Հայաստան» հումանիտար աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Զ. Լավյան - «Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)



5. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 22-րդ կետի՝ «Աջակցություն երիտասարդության բարոյահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծմանը», և 23-րդ կետի՝ «Հոգևոր և մշակութային խնդիրների վերաբերյալ երիտասարդության գիտելիքների և տեղեկացվածության մակարդակի բարձրացում», շրջանակներում աշխատանքներ իրականացնելու և համապատասխան հաշվետվություն և առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- Է. Մանանդյան - խմբի ղեկավար, «Նոր Հայաստան» հումանիտար աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Ա. Նազարյան - ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
- Է. Հակոբյան - «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Ց. Ակոպյան - Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Հ. Ափյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Ա. Թադևոսյան - «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Գ. Իսկանդարյան - Երիտասարդ առաջնորդների դպրոցի կոորդինատոր (խորհրդի անդամ)
- Մ. Մովսիսյան - «Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ (խորհրդի անդամ)
- Ռ. Սարգսյան - «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

6. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 24-րդ կետի՝ «Արցախի երիտասարդության մասնակցության խթանում», շրջանակներում աշխատանքներ իրականացնելու և համապատասխան հաշվետվություն և առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- Է. Հակոբյան - խմբի ղեկավար, «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Ց. Ակոպյան - Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Հ. Ափյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Է. Մանանդյան - «Նոր Հայաստան» հումանիտար աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)

7. Խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագրի 25-րդ կետի՝ «Աջակցություն միջազգային երիտասարդական աշխատանքում ՀՀ երիտասարդական կազմակերպությունների մասնակցությանը», շրջանակներում աշխատանքներ

իրականացնելու և համապատասխան հաշվետվություն և առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- Ա. Թադևոսյան - խմբի ղեկավար, «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Կ. Ղազինյան - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
- Ա. Միրթարյան - «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Է. Հակոբյան - «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ)
- Հ. Ափյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ (խորհրդի անդամ)
- Լ. Նալչաջյան - «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ)
- Զ. Լավյան - «Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ),
- Ա. Ուդումյան - Երիտասարդության սոցիալական և զբաղվածության հարցերի գծով փորձագետ (խորհրդի անդամ):

8. Հանձնարարել բոլոր աշխատանքային խմբերին 2010 թվականի գործունեության ծրագրի համապատասխան կետերով սահմանված ժամկետներում կազմակերպել անհրաժեշտ աշխատանքները և արդյունքների մասին պարբերաբար տեղեկացնել Խորհրդի նախագահի տեղակալին և Խորհրդի քարտուղարին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

19 հունիսի 2010 թվականի N 5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՂՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնություններին (2010-2011 թվականների համար)՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմինին՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը պետական բյուջեով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհների տրամադրման ժամանակ առաջնորդվել հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնություններով՝ միջոցների առնվազն 60%-ը տրամադրելով առաջնայնությունների շրջանակներում ներկայացված ծրագրերին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ վարչապետին  
առընթեր ազգային երիտասարդական  
քաղաքականության խորհրդի  
19 հունիսի 2010թ. նիստի N 5 որոշման

**Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական  
պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների  
ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական  
կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հիմնական  
առաջնայնությունները (2010-2011 թվականների համար)**

Ստորև ներկայացված են 2010-2011 թվականների համար ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականության ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունները: Առաջնայնությունների հիմքում ընկած են ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգում», ՀՀ Կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարությունում և Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 10.02.2010թ. նիստի N 14.3/31377-10 արձանագրության համապատասխան դրույթները:

**Հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի  
հիմնական առաջնայնությունները`**

***1. Երիտասարդների մասնակցության խթանում***

- 1.1 Համայնքային մակարդակներում երիտասարդական քաղաքականությունների մշակում և իրականացում,
- 1.2 Երիտասարդության հետ աշխատող ՀԿ-երի կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,
- 1.3 Մարզերում երիտասարդական ծրագրերի իրականացում, մարզաբնակ երիտասարդների մասնակցության հնարավորությունների ընդլայնում,
- 1.4 Աջակցություն երիտասարդության միջազգային շարժունակությունը,

1.5 Երիտասարդական կամավորական աշխատանքի խթանում:

## ***2. Երիտասարդության զբաղվածության խնդիրներ***

2.1 Աջակցություն երիտասարդների աշխատանքային կողմնորոշմանը,

2.2 Աշխատանք գտնելու համար երիտասարդներին վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների մատուցում,

2.3 Խոցելի խմբերի երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրներ:

## ***3. Երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն***

3.1 Բանակ-հասարակություն կապի ամրապնդում,

3.2 Աջակցություն երիտասարդության բարոյահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծմանը,

3.3 Հոգևոր և մշակութային խնդիրների վերաբերյալ երիտասարդության գիտելիքների և տեղեկացվածության մակարդակի բարձրացում:

## ***4. Համահայկական և միջազգային երիտասարդական ծրագրեր***

4.1 ԼՂՀ և ՀՀ երիտասարդական կազմակերպությունների համագործակցություն,

4.2 ԼՂՀ երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում,

4.3 Աջակցություն միջազգային երիտասարդական աշխատանքում ՀՀ երիտասարդական կազմակերպությունների մասնակցությանը,

4.4 Հայաստանի և սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների համագործակցություն՝ ուղղված սփյուռքում հայապահպանության խնդիրների լուծմանը և Հայաստան-սփյուռք գործակցության զարգացմանը,

4.5 Միջմշակութային ուսուցման եւ երկխոսության խթանում:

## ***5. Երիտասարդական տեղեկատվություն և ուսումնասիրություններ***

5.1. Երիտասարդական տեղեկատվության տարածման գործիքների զարգացում,

5.2. Երիտասարդական խորհրդատվության ծառայությունների զարգացում,

5.3. Երիտասարդական ուսումնասիրությունների իրականացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2010 թվականի N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՂՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԱՌՅԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Խորհուրդը ո ռ ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի (այսուհետ՝ Առցանց համակարգ) ներդրման առաջարկին:
2. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, 2010 թվականի հուլիսի 1-ից պետական բյուջեով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհները տրամադրել առցանց համակարգի միջոցով:
3. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, միջոցներ ձեռնարկել հասարակական կազմակերպության կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ուսանողական և երիտասարդական կազմակերպված խմբերին կամ կազմակերպություններին (ուսանողական խորհուրդներ, գյուղական երիտասարդական ակումբներ և այլն) երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերից ֆինանսավորում ստանալու համար համապատասխան ընթացակարգերի մշակման ուղղությամբ, և դրանք ներդնել դրամաշնորհների առցանց համակարգում:
4. Հանձնարարել Խորհրդի նախագահի տեղակալ Ա. Քարամյանին և Խորհրդի քարտուղար Ռ. Մարկոսյանին ներկայացնել առաջարկություն պետական բյուջեի միջոցների հաշվին հասարակական կազմակերպությունների ծրագրերի ֆինանսավորման հարցերով Խորհրդի փորձագիտական խմբի անհատական կազմի

վերաբերյալ՝ դիտարկելով նաև Խորհրդի անդամ չհանդիսացող անձանց ներգրավվելու տարբերակը:

5. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը, պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի համար սահմանել տրամադրվող ֆինանսական միջոցների հետևյալ չափաբաժինները.

1. Մեկնարկային ծրագրեր. նախկինում պետական բյուջեից դրամաշնորհ չստացած կազմակերպությունների համար՝ մինչև 500.000 դրամ:

2. Հիմնական ծրագրեր. նախկինում պետական բյուջեից ծրագրեր ստանալու և արդյունավետ կառավարելու փորձ ունեցող կազմակերպությունների համար՝ 500.000 դրամից մինչև 2 միլիոն դրամ: «Ուղևորության» և «Համաֆինանսավորում» տիպի ծրագրերի համար սույն կետում նշված նվազագույն գումարի շեմը կարող է չգործել:

3. Հատուկ ծրագրեր. նախկինում պետական բյուջեից ծրագրեր ստանալու և արդյունավետ կառավարելու, ինչպես նաև մեծածավալ ծրագրեր իրականացնելու փորձ ունեցող կազմակերպությունների համար՝ 2 միլիոն դրամից մինչև 15 միլիոն դրամ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ